

ՀՈՒՐԵՐ ԿԱԼ ԿԱԹԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻՑ

ՆՈԳԵՆԱՆԳԻՍՏ ԵՎ ՑԵՐԵԿՈՒՅԹ՝ ՆՎԻՐՎԱԾ ԱՂՋԻԿՆԵՐԻ ԴԱՎԹՅԱՆ ԴՊՐՈՑԻ ՆԻՄՆԱԴԻՐ-ԲԱՐԵՐԱՐ ԴԱՎԻԹ ԴԱՎԹՅԱՆԻ ՆԻՇԱՏԱԿԻՆ

Փետրվարի 7-ին Կալկաթայի հայոց Մարդասիրական ճեմարանում, առավոտյան միասնական աղոթքից հետո, հանդիսապետությամբ հնդկահայոց հոգևոր հովիվ և Մարդասիրական ճեմարանի կառավարիչ Տ. Օշական վրդ. Գյուլգյուլյանի, կապարվեց հոգեհանգիստ՝ այժմ ճեմարանի անբակարելի մաս կազմող Աղջիկների Դավթյան դպրոցի հիմնադիր-բարերար Դավիթ Դավթյանի (1858-1936 թթ.) հոգու խաղաղության համար, ում մահվան 70-ամյա փարելիցն էր: Վերջինս հնդկահայերի շրջանում աղջիկների հայեցի կրթությունն ապահովելու համար 1922 թ. իր սեփական միջոցներով հիմնում է Դավթյան Օրիորդաց Տարրական Վարժարանը, որը 1953 թ. միանում է Մարդասիրական ճեմարանին՝ դառնալով նրա անբակարելի մասը: Դավիթ Դավթյանի հոգու հանգստության համար հոգեհանգիստ էր կապարվել նաև փետրվարի 5-ին Ս. Պապարազից հետո Ս. Նազարեթ հայկական եկեղեցու բակում գրնվող բարերարի շիրմի մոտ:

Կեսօրին Մարդասիրական ճեմարանի սաներն իրենց ուժերով պապրասպել էին ցերեկույթ՝ նվիրված մեծ բարերարի պայծառ հիշապակին, որի ընթացքում ճեմարանականներն անդրադարձան Դավիթ Դավթյանի կենսագրությանը, նրա անմնացորդ նվիրվածությանը կալկաթահայությանն ու Նայոց Եկեղեցուն:

Ցերեկույթի ավարտին ճեմարանի փնօրեն Ջեյմս Դայասը ևս անդրադարձավ բարերարի գործունեությանը և իր ուրախությունը հայտնեց, որ վերջին շրջանում երեխաներն սկսել են ավելի մեծ ուշադրություն դարձնել իրենց կրթությանն ու պահվածքին: Վերջում օրհնության ու գնահատանքի իր խոսքը հավաքվածներին ուղղեց ճեմարանի կառավարիչ Նայր Սուրբը:

«Ամենքդ այսպեղ եք՝ այս պարմական կրթօջախում կրթություն ստանալու համար, ուստի պետք է ճիշտ օգտագործեք Ձեզ փրված բոլոր հնարավորություններն ու միջոցները՝ Ձեր իսկ առաջադիմությամբ ուրախացնելով և՛ Ամենայն Նայոց Կաթողիկոսին, ում ամենօրյա ուշադրության ներքո եք, և՛ Մեզ, և՛ Ձեր ծնողներին ու հարազատներին՝ դրանով իսկ իրականություն դարձնելով Աղջիկների դպրոցի բարերար Դավիթ Դավթյանի նվիրական երազանքը», - նշեց Օշական վարդապետը:

Ցերեկույթին ներկա էին ճեմարանի պաշտոնությունը և ուսուցչական կազմը: